

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Երեւանի ֆաղաֆային ինֆնավարութեան ֆառամեայ գործունէութիւնը

Երեւանի ֆաղաֆային ինֆնավարութեան այգմեան կազմը, աւարտելով իր քառամեայ գործունէութեան շրջանը, հրատարակել է իր գործունէութեան մանրամասն հաշիւը: Կարծում ենք աւելորդ չի լինի ծանօթացնել մեր զաւառական ամենամեծ քաղաքներից մէկի ինֆնավարական մարմնի գործունէութեան հետ, մանաւանդ որ եկող սեպտեմբերին նշանակուած են նոր ընտրութիւններ:

Երեւանի ֆաղաֆային խորհուրդը բաղկացած է 50 ձայնաւորներից: Չորս տարուայ ընթացքում զանազան պատճառներով դուրս են գնացել 13 ձայնաւորներ, որոնցից 5-ի տեղ հրաւիրուել են 5 անձնափոխանորդներ, այնպէս որ ֆաղաֆային խորհրդի կազմը վերջնականապէս բաղկացած է եղել 42 ձայնաւորներից:

Ընտրուած 50 ձայնաւորներից 43-ը հայ են, 4 ռուս և միմիայն 3 թուրք:

Քառամեայ շրջանում խորհրդին առաջարկուած են եղել 798 հարցեր, որոնք ամբողջովին բացի մէկից լուծուած են ստացել խորհրդի վճռով:

Քաղաքային ներկայ կազմի գործունէութեան հէնց սկզբից նրա առաջ դրուած են եղել քաղաքի համար շատ կարեւոր հարցեր, այն է մասնաւոր անհատների կողմից քաղաքապատկան հողաբաժինների սեփականացումը, քաղաքին ջուր մատակարարելը, ձիաքարշի կառուցումը և վերջապէս քաղաքային սպանդանոցի շինութիւնը:

Քաղաքապատկան մասնաւոր անհատների կողմից գրաւուած հողաբաժինների 116 հարց է յարուցուած, որոնցից միմիայն 17 դրամական պահանջներ են, Այդ հարցերից 3-ը—

այժմ գտնուում են սենատում, 22-ը դատաստանական պալատում, 21-ը Երեւանի նահանգական և հաշտարար դատարաններում, 5-ը դադարեցրուած են, 46—մերժուած և 19-ը վերջնականապէս վճռուած յօգուտ քաղաքի: Այս 19 վճիռներից գործադրուած են 9-ը և գործադրութեան մէջ են 10-ը:

Ջրի հարցը ձեւակերպուել է վերջնականապէս և այժմ ուղարկուած է բարձր կառավարութեան հաւանութեանը: Ջրի ակունքները յայտնի են Վերի-Բուլաղո անունով, որոնք գտնուում են քաղաքից 15—18 վերստ հեռաւորութեամբ: Քաղաք կը բերուի պիտանի և առողջարար համարուած այդ ջուրը նոր սիստեմի ջրանցքի միջով, քաղաքի մէջ կը դրուեն 8 ծորակներ, ջուրը կը վաճառուի 100 վկերօն 30 կոպէկով: Քաղաքը կ'ունենայ կօնցեսիայի վաստակից մասը 200/0: Կօնցեսիան տրուած է ինժեներ Ա. Բարովին—36 տարի ժամանակով:

Նոյն անձնաւորութեան 36 տարի ժամանակով տրուած է ձիաքարչի կօնցեսիան: Այս երկու ձեռնարկութիւնները պահանջում են 200—300,000 ռուբլի դրամագլուխ:

Նահանգական վարչութեան հաւանութիւնը գտած է նաև քաղաքային սպանդանոցի հարցը և մինչև անգամ չէնքը աճուրդով տրուած է 19 թէ 20 հազար ռուբլով: Ապա մեր քաղաքի մտացունքի վրայ կը նշանակուի բժշկական հսկողութիւն և մսի վրայ կը դարձնուի խիստ ուշադրութիւն:

Բաւարար լուծում չը ստացան երկու հարց: Առաջինը—Երեւանը դարձնել Պարսկաստան տանող երկաթուղու գծի համար գլխաւոր կայարան, քանի որ Երեւանը ընկաւ տանող գծից առնուազն 15—20 վերստ հեռաւորութեան վրայ, կապուելով գծի հետ յատուկ գծով: Երկրորդ՝ չը լուծուած հարցն է շուկայի հսկողութիւնը և տակսայի կատարումը, մեր վաճառողները ոչ մի ուշադրութիւն չեն դնում քաղաքային վարչութեան նշանակած տակսանքի վրայ, այլ եւ Երեւանում չքաւոր ու աղքատ դասը համարեա թէ միշտ գնում է մթերքի վատը և տակսայից էլ վեր, բայց նա ոչ ժամանակ ունի և ոչ էլ վստահութիւն բողոքելու ուր հարկն է: Իսկ հացավաճառ մաշադին կամ մտավաճառ հաջին գիտէ ում հետ ինչ կերպ վարուել: Նա ինչո՞ւ է «մատը բղէղի բնին մօտեցնում»—աղմուկ բարձրայնող մարդուն լաւ կը ճանապարհի, իսկ իր բանը կը դրստի խեղճերի հաշուով...

Քաղաքային ինքնակարութեան ներկայ կազմի գործունէութեան մի փաստ ևս պիտի արձանագրել: Երեւանի հոչակաւոր Մ էյ դաշը ներկայանում էր իր չադիրներով—աղտոտութիւնների, կոխ ու աղմուկների և գրպաններ կտրելու աւա-

պարէզ և այժմ բաւական կանոնաւորուած և մաքրուած է քաղաքի այդ մասը:

Կրթական դործը քաղաքում պէտք է ասած զարգացած է քիչ չափով: Բացի արական և իգական գիմնազիաները, ուսուցչական և հայոց թեմական դպրոցները, քաղաքում գոյութիւն ունեն մի երեք-դասարանեան դպրոց Պուշկինեան կոչուած, որի համար քաղաքը տալիս է 3000 ռուբլի նպաստ, և Գայիանեան օրիորդաց դպրոցը ու Նորք քաղաքամասի ծխական զրօրոցը: Ի հարկէ 30,000 ընակիչ ունեցող մի քաղաքի համար շատ քիչ է տարրական մի երկու դպրոցը: Յունիսի 6-ի հերթական ժողովում խորհուրդը որոշեց եկող սեպտեմբերից վերջնականապէս բանալ քաղաքի հաշուով մի երկդասեան տարրական դպրոց:

Քաղաքային վարչութիւնը մեծ հոգս է տարել այդեգործական դպրոցի համար, մասնադիտական մի ճիւղ, որը աւելի քան կարեւոր է արդիւնաբեր Երեւանեան նահանգի համար:

Քաղաքը եկող տարուանից բանալու է նաև հասարակական գրադարանը, որը որոշուած էր բանալ դեռ ևս թագադրութեան աօրթիւ—բայց ինչ ինչ պատճառներով յետաձգուեց մինչև և մեր օրերը:

Արժէ առանձին ուշք դարձնել քաղաքի ֆինանսական մասի վրայ, որտեղ իսկապէս երեւում է ներկայ կազմի վերաբերմունքը գէպի քաղաքի շահերը:

1899 թուի յունուարի 1-ին քաղաքը ունեցել է պահեստի դրամագլուխ մի չնչին գումար, այն է ընդամենը 1440 ռ. և մի խոշոր գումար պարտք, իսկ 1902 թուի յունուարին այդ գումարը բարձրացել է 24277 ռ. 68 կոպ., որից 8078—82 կոպ. գոյացել է քաղաքապատկան հողերի վաճառումից, իսկ մնացեալը—16196—86 կոպ. գոյացել է 1900—1901 թուերի մուտքի և ելքի մնացորդներից: Բացի այս վճարուել է 1892 թուի խօլերայի պատճառով արուած քաղաքային փոխառութիւնը, որի գումարը իր տոկոսների հետ միասին հասնում էր 18741—04 կ.: Այս միայնելով պահեստի գումարին, կը ստացուի մի պատկառելի թիւ՝ 43018—72 կ.:

Ահա 1899, 1900 և 1901 թուերի մեր քաղաքի մուտք և ելքի տախտակը, որից պարզ դադարւար է կազմուած թէ որպիսի աղբիւրներից գոյացել է մուտքը և քաղաքի որ կարիքների վրայ ինչ չափով են ծախքեր եղել:

Մ ու լ ա ղ

Անշարժ կալքերի գնահատումից	1899 թ. 43,872 59	1900 թ. 45,262 96	1901 թ. 37,381 07	Միասին 126,516 62	% 39
Առևտրական ձեռնարկ.	10,061 55	10,764 40	11,012 16	31,838 11	10
Քաղաք. կալուածքներից	46,057 20	46,258 90	42,727 87	135,043 97	41
Զան. մուտ., ծախք. ա- ւել., տոկ., տուգ. ևայլն	9,093 77	11,636 87	11,612 21	32,341 85	10
Ընդամենը	109,085 11	113,923 13	102,733 31	325,741 55	100

Ե լ ղ

Նահանգ. քաղաք. մասի վարչութեան վրայ	1899 թ. 1,291 —	1900 թ. 1,291 —	1901 թ. 1,291 —	Միասին 3,873 —	% 1 ¹ / ₂
Քաղ. ինքնավ. պահպան.	22,942 82	25,057 75	25,217 87	73,218 44	24
Բանտի վրայ, վառ. և լուս.	3,355 49	2,657 94	— —	6,013 33	2
Զօրքի բնակութեան	14,772 60	11,808 07	9,883 70	36,464 37	12
Ոստիկանութեան պահպ.	18,479 53	18,715 49	18,725 40	55,920 42	18
Հրդեհաշէջների պահպան.	331 74	636 40	142 50	1,110 64	1 ¹ / ₂
Քաղաքի բարեկարգութ.	9,705 07	17,941 71	18,667 70	46,314 48	15
Կրթական գործի	3,186 90	3,350 —	3,400 —	9,936 90	3
Բժշկ. և սանիտ. հսկող.	11,763 69	13,678 68	14,470 89	41,913 26	13 ¹ / ₂
Պարտքի վճարումն	19,827 78	— —	— —	19,827 78	6 ¹ / ₂
Զանազան ծախքեր	3,946 37	3,920 34	4,557 98	12,424 69	4
Ընդամենը	109,602 99	99,057 46	98,357 04	307,017 49	100

Ինչպէս ցոյց է տալիս այս հաշիւը, 3 տարուայ բիւդժէի 44⁰/₀-ը ծախսուել է զօրքի, ոստիկանութեան, բանտի պահպանութեան և այլ ծախքերի համար, 24⁰/₀-ը ծախսուել է քաղաքային ինքնավարութեան վրայ և միմիայն 32⁰/₀-ը՝ քաղաքի անմիջական կարիքների, այն է քաղաքի բարեկարգութեան, բժշկական և կրթական պէտքերի վրայ: Մանաւանդ աչքի է ընկնում կրթական գործի վրայ 3⁰/₀ և հրդեհաշէջների պահպանութեան վրայ միմիայն 1¹/₂⁰/₀ ծախսելը:

Կարելի է ասել որ Երեւանի քաղաքային ինքնավարութեան վերջին չրջանի գործունէութիւնը համեմատաբար աչքի ընկնող էր և ընտրուած ձայնաւորները, ընդհանուր առմամբ, արդարացրին հասարակութեան յոյսերը: